ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1961 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», ՀԱՏ. 1-ԻՆ. ԵՐԵՎԱՆ. 1960 Թ.. ՀԱՍՈՒ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորը, որն ընդամենը երկամյա պատմություն ունի, ընթերցող հասարակությանն է ներկայացրել իր գիտական տարեգրանքի անդրանիկ վաստակը՝ «Արևելագիտական ժողովածուն»: Սեկտորի այդ նախաձեռնությունը, անշուշտ, մի քայլ է, որն արժանի է խրախուսանքի:

Հայտնի է, որ արևելագիտությունը մեզանում ունի լավագույն տրադիցիաներ: Հայ գիտնականները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել Հայաստանին հարևան արևելքի ժողովուրդների պատմության, լեզվի ու գրականության ուսումնասիրության նկատմամբ: Այդ հետաքրքրությունը առավել աճեց Սովետական իշխանության տարիներին և մանավանդ վերջին շրջանում, երբ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ռետեմում ստեղծվեց Արևելագիտության սեկտորը, որը զբաղվում է Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների պատմության, մշակույթի և անտեսության առանձին խնդիրների գիտական մշակմամբ: Դրախոսվող «Ժողովածուն» այդ ուղղությամբ սեկտորի կատարած աշխատանքների համեստ վաստակն է:

«Ժողովածուն» ընդգրկում է 13 հոդված և մեկ հաղորդում, որոնք հիմնականում բովանդակում են Իրանի ու Թուրքիայի պատմությանն առնչվող զանազան հարցեր: Թեմատիկայով և ժամանակագրական առումով այդ հարցերը բավականին քաղաքաղան են, իսկ գիտական տեսակետից ուշարժան:

Համառոտակի կանգ առնենք «Ժողովածու»-ում զետեղված հոդվածներից մի քանիսի վրա միայն, մի քանիսի, որովհետև ներկա գրախոսության սահմանները հնարավորություն չեն ընձեռում բոլոր հոդվածները քննարկելու առանձին-առանձին:

«Ժողովածուն» սկսվում է «Լենինը և Արևելքի ժողովուրդները» հոդվածով, որի հեղինակն է պատմական գիտությունների թեկնածու Հ. Ինձիկյանը: Հայտնի է, որ Վ. Ի. Լենինը մեծ կարևորություն էր տալիս գաղութային ժողովուրդների ազգային-ազատագրական շարժմանը, այն գիտելով որպես միջազգային պրոլետարական շարժման անբաժանելի մասը: Մեկնաբանելով ազգային-գաղութային հարցի վերաբերյալ իր տեսությունը, Լենինը ելնում էր ավյալ ժամանակաշրջանի՝ իմպերիալիզմի էպոխայի աճող հակասություններից, իմպերիալիզմ, որն իր զարգացմամբ գաղութային երկրների ճնշված բազմամիլիոն ժողովուրդներին անխուսափելիորեն գրգռում էր միջազգային պրոլետարիատի դաշնակիցը: Շարադրելով Լենինյան ուսմունքը ազգային-գաղութային հարցի մասին և այն կապելով Արևելքի ժողովուրդների գարթոնքի ու պայքարի հետ, հեղինակը հանգամանորեն խոսում է գաղութային երկրների ժողովուրդների ազատագրական շարժման վրա ռուսական ռեոլյուցիաների, ՍՍՌՄ-ում սոցիալիզմի հաղթանակի, ինչպես նաև Չինաստանում և Արևելքի մյուս երկրներում սոցիալիստական կարգերի հաստատման ունեցած ազդեցության մասին: Ընդ որում, ուշագրավն այստեղ այն է, որ այդ շարադրանքը հեղինակը կատարել է ժամանակակից պատմական կացությունից բխող փաստական հետաքրքիր նյութի հիման վրա: Նա չեզոտում է Հոկտեմբերյան ռեոլյուցիայից հետո Արևելքի ժողովուրդների պայքարի արագ վերելքը, մի պայքար, որը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առանձնակի լայն ֆավալ ու մեծ մասշտաբներ ընդգրկեց և Արևելքի շատ երկրների համար պսակվեց հաղթանակով. նրանցից մի քանիսը կանգնեցին զարգացման սոցիալիստական ուղու վրա, իսկ շատերն էլ ձեռք բերեցին քաղաքական անկախություն, թեև շարունակում են մնալ զարգացման կապիտալիստական շրջանակներում:

Ուշագրավ է նաև հոդվածի այն բաժինը, որտեղ լուսաբանված է Սովետական Միության և սոցիալիստական լագերի մյուս երկրների կողմից Արևելքի երկրներին ցույց արվող անշահախնդիր օգնությունը՝ նրանց տնտեսային էկոնոմիկան զարգացնելու և քաղաքական անկախությունն ամրապնդելու գործում։

Հ. Ինձիկյանը ցույց է տվել, որ իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզումը և Արևելքի ժողովուրդների ազատագրումը ազգային-գաղութային հարցի մասին Վ. Ի. Լենինի ուսմունքի պրակտիկ ապացույցներն են, իրական մարմնացումը լենինյան այն մեծ գաղափարների, որ արթնացող Արևելքի շարժումն ու միջազգային պրոլետարիատի պայքարը ռեոլյուցիոն այն երկու մեծ ուժերն են, որոնք, հեղինակի խոսքերով ասած, ազատվելու են իմպերիալիզմի կործանումը և սոցիալիզմի հաղթանակը համայն աշխարհում» (էջ 37)։

Հոդվածում-ում գեղեցիկ արժեքավոր ու հետաքրքիր հոդվածներից է Հ. Եգանյանի «Հողային հարցը ժամանակակից Իրանական գյուղում» աշխատությունը։ Սկզբից ևեթ նշենք, որ հոդվածագիրը գիտական լրջությամբ ու բարեխղճությամբ վերլուծել ու լուսաբանել է այն հարուստ փաստական նյութը, որն ինքն օգտագործել է թեման ուսումնասիրելիս։ Այդ նյութը գերազանցապես վերցված է իրանական աղբյուրներից, մի հանգամանք, որն առավել նպաստել է հարցի մանրագնին ուսումնասիրությանը։

Հողային ռենտայի մասին մարքսիստական ուսմունքի լույսի ակ Եգանյանը տվել է ժամանակակից Իրանում գյուղացիներից գանձվող ռենտայի, տուրքերի ու նրանց կողմից կատարվող պարակների բաղմաթիվ ձևերի և չափերի վերլուծությունը։ Ինքնին հասկանալի է, որ այդ հարցի լուսաբանումը գրեթե օգնում է ժամանակակից Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրությանն առհասարակ։ Արդեսդի ցույց տա, թե ինչպես է պայմանավորված հողային ռենտայի տարբեր ձևերի գոյությունը Իրանում՝ հեղինակը իրավացիորեն կանգ է առնում այնտեղ տիրող հողային սեփականության վրա և ն-ում, որ այն արտահայտվում է չորս ձևերով՝ մալեքիյաթ արրարի (խոշոր և միջակ կալվածատիրություն), մալեքիյաթ խորդեմալեքի (մանր հողատիրություն), մալեքիյաթ խալիսե (պետական հողատիրություն) և մալեքիյաթ վակֆ (մզկիթապատկան և նվիրատուական այլ հողեր)։ Ընդ որում հողերի գերակշիռ մասը՝ 80 տոկոսը, գրաված է կալվածատերերի ձեռքում, 15 տոկոսը պետական, վակֆային և չահական հողեր են և միայն հինգ տոկոսն է պատկանում գյուղացիներին։ Ահա թե ինչու գյուղացիությունը 85 տոկոսը հողազուրկ է և ստիպված է մշակել կալվածատիրական հողերը։ Վերոհիշյալ փաստերից երևելով, հոդվածագիրը եզրակացնում է, որ Իրանի գյուղատնտեսության մեջ իշխող ֆեոդալա-կալվածատիրական հարաբերություններն են, որոնցով և պայմանավորված է երկրի տնտեսության հետամնացությունը։

Քննելով Իրանի հողային հարաբերությունները, հոդվածագիրը հանգում է այն եզրակացությանը, որ երկրում տիրում են մինչկապիտալիստական ռենտաների երեք ձևերն էլ՝ մթերային ռենտայի գերակշռությամբ։

Ժամանակակից Իրանում հողը մշակելու համար կալվածատերերը չեն դիմում գյուղատնտեսական բանվորներ վարձելու մեթոդին, նրանք ամբողջ հողը տալիս են վարձով։ Ընդգծելով այդ, Հ. Եգանյանը, երևելով լենինյան հայտնի գրությունից, նշում է, թե ինքնին այդ փաստը վկայում է, որ իրանական գյուղն ապրում է անցումային՝ այսինքն կապիտալիստականին անցնելու ընթացքը, իհարկե տակավին ֆեոդալական հարաբերությունների գերիշխանության պայմանների։ Բայց հեղինակը հանգամանորեն չի նշել անցումային այդ պրոցեսի գանգաղ ընթացքը, թե, ինչպես երևում է նրա օգտագործած նյութից, նա լրիվ հնարավորություն է ունեցել կատարելու այդ։

Ցավագանց ուշագրավ է հոդվածի այն մասը, որ պատմում է կալվածատիրական հողերը վարձով տալու կարգի մասին։ Հեղինակը հիմնականում գանգատվում է հողը վարձով տալու երեք սիստեմ, որոնցից ամենատարածվածը մոլարեե կամ կիսարալային սիստեմն է։

Առավել խորանալով հարցի էության մեջ և հմտորեն օգտագործելով տոկա նյութը, հեղինակը գտնում է, որ հողը վարձով տալու տիրապետող սիստեմի՝ մոլարեեի կամ կիսարալային սիստեմի հիմքում ընկած է միջնադարյան հինգանդամյա սկզբունքը, ըստ որի բերքը բաժանվում է հինգ մասի՝ գյուղատնտեսության բաղկացուցիչ հինգ տարրերի՝ հողի, ջրի, սերմացուի, աշխատուժի և անասունների դիմաց, ըստ դրանց պատկանելիության։ Գարգ է, որ հողից, տրադիցիայի միջոցներից զուրկ գյուղացին, աննշան բա-

գությունները, ոտանում է բերրի միայն մեկ հինգերորդը. այդինքն՝ միայն իր ոռոգումի դիմաց։ Բացի բաշխման այս հիմնական եղանակից հոդվածում բերված են նաև այլ եղանակներ. դրանք են՝ սեյերբարը. նիսֆերարը և չարեքդարը։ Կանգ չառնելով դրանցից յուրաքանչյուրի վրա առանձին-առանձին, նշենք, սակայն, որ ինչպես այդ լուսաբանված է հոդվածում, այդ եղանակները ևս կրկին անդամ բացահայտում են Իրանի գյուղատնտեսության հետամնաց ֆեոդալական բնույթը և ցույց տալիս աշխատագոր գյուղացու ծանր վիճակը։

Գրախոսվող հոդվածի մի գլուխ մասում քննարկվում են Իրանի տարբեր նահանգներում և շրջաններում կիրառվող բերրի բաշխման եղանակների ու չափերի բնորոշված անվանումներն ու առանձնահատկությունները և գյուղացիների կատարած պարտակները։ Այս բաժինը նույնպես գիտական լուրջ հետաքրքրություն է ներկայացնում, մանավանդ, որ այնտեղ մեծ տեղ է արված կոնկրետ նյութի շարադրանքին։ Բաժինը, սակայն, առավել շահած կլիներ, եթե այնտեղ մեծ տեղ բռնեին հատկապես գյուղացիության վիճակը բնութագրող նյութերը։

Պատմական գիտությունների թեկնածու Ե. Սարգիսովը «Հոդվածում» հանդես է եկել «Անդրկովկասյան ժողովուրդների պայքարը Թուրքական օկուպանտների դեմ 1918 թվականին» խորագիրը կրող հոդվածով։ Թուրքական օկուպացիայի հարցը մեր պատմական գրականության մեջ բազմիցս քննարկման առարկա է եղել։ Հրապարակի վրա առկա են մեծ քանակությամբ գրքեր ու հոդվածներ, որոնք վերաբերում են այդ թեմային առհասարակ, կամ էլ՝ դրա հետ կապված այս ու այն հարցին։ Նկատի ունենալով այս, նշենք, որ Նորը Սարգիսովի հոդվածում հատկապես այն է, որ նա բավականին հետաքրքրիր նյութ է հաղորդում Թուրքական օկուպանտների դեմ անդրկովկասյան ժողովուրդների՝ 1918 թ. մղած պայքարի մասին։ Որպես Թուրքական օկուպանտներին անդրկովկասյան ժողովուրդների կողմից ցույց տված դիմադրության փայլուն օրինակ՝ հեղինակը մատնանշում է անում Սարդարաբադի, Բաշ-Ապարանի և Ղարաբիլիսայի տակ հայաշխատավորությունից Թուրքական կանոնավոր բանակի կրած պարտությունը։ Դրա հետ միասին նա բերում է Հայաստանում ու Ադրբեջանում Թուրքական օկուպանտների դեմ մղված պարտիզանական պայքարի, ինչպես նաև Թուրքական հրամանատարության պլանները ձախողելու մի շարք օրինակներ։ Հետաքրքիր են նաև հոդվածի այն էջերը, որոնք լուսաբանում են Սովետական Ռուսաստանի կառավարության ողնությունը հայ ժողովրդին՝ նրա համար ծանր այդ շրջանում։ Բացի դիվանագիտական ճանապարհով ցույց տված միջնորդությունից, հեղինակը նշում է նաև մի այլ հետաքրքիր փաստ. Սովետական կառավարությունը նպաստում է Ռուսաստանի տարբեր շրջաններում ապրող հայերից կամավորական ջոկատներ ստեղծելու և դրանք Թուրքական զավթիչների դեմ պայքարելու նպատակով Հայաստան ուղարկելու գործին։ Թուրքական ագրեսիայի կապակցությամբ հեղինակը մերկացնում է անդրկովկասյան բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ազգադավ քաղաքականությունը՝ որպես բուն էության այդ ագրեսիային նպաստող և երկրամասի աշխատավոր զանգվածների մարտական ուժը կազմալուծող հանգամանք։

Սակայն Ե. Սարգիսովի հոդվածի մի գլուխ մասը թե փաստական նյութի օգտագործման և թե նրա վերլուծման տեսակետից, նորություն չի ներկայացնում, եթե չմոռանանք բավականին ստվար ցանկ կազմող այն գրականությունը, որ լույս է տեսել մեզանում թեկուզ հեղափոխության տարիներին՝ Հայաստանի 1917—1920 թվականների պատմության վերաբերյալ։ Խոսենք կոնկրետ։

Հիսուն էջ կազմող հոդվածից ավելի քան տասը էջ (էջ 210—220) հեղինակը նվիրել է Թուրքական օկուպացիայի հետևանքով հայկական շրջանների կոտորածների ու կրած վնասների լուսաբանմանը։ Այսպես՝ հեղինակը ինչպես ասում են, բաց դռներ է թակում. նա ոչ մի նոր բան չի հաղորդում և, ըստ երևույթին, չէր էլ կարող հաղորդել, քանի որ դա շատ ծեծված հարց է, այն բավականին ընդարձակ տեղ է գտել Մ. Ադայանի, Գ. Ղարիբջանյանի, Հ. Էլչիբեկյանի և այլ հեղինակների՝ հայ ժողովրդի պատմության այդ շրջանին նվիրված աշխատություններում[1]։ Ահա գրականության համեմատությամբ բգ-

[1] Տե՛ս Մ. Ադայան, Հոկտեմբերյան ռեոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Գ. Ղարիբջանյան, Հայաստանի կոմ. կազմակերպությունները Սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, А. Эдзчибекян. Установление Советской власти в Армении և այլն։

գալի կրկնություններ կան նաև հայ աշխատավորների կողմից Թուրքական զորքերին ցույց տված դիմադրության վերաբերյալ բերված փաստերում։ Վերջին հանգամանքը մենք չենք ակնարկի. եթե կրկնվող փաստերը ստացած լինեին ինչ-որ նոր մեկնաբանություն։ Մինչդեռ այդ չկա։

Ինչպես նաև զաշնակների Թուրքոֆիլ քաղաքականությունը և այդ առիթով նշելով Ահարոնյանի ու Խատիսյանի պահանջը կառավարությունից՝ զգաստացնելու Անգորայի զորքերի կողմից Թուրքական բանակին ցույց արվող դիմադրությունը, հեղինակը, դիտելու ինչու, սահմանափակվում է միայն այդքանով։ Մինչդեռ Թուրքական ագրեսորների դեմ Անգորայի զորքերի մղած մարտերի լուսաբանումը պետք է պասիվ տեղ գտներ նման վերաբերմունքի հոդվածում։

Մի դիտողություն ևս. «Ժողովածու»-ի 191—192-րդ էջերում հեղինակը գրում է՝ «Ցավոր որոշ, Անդրկովկասում Թուրք-գերմանական հակասություններ բավարար արտացոլում չեն գտել մեզ մոտ հրատարակված աշխատություններում, որոնք վերաբերում են այս ժամանակաշրջանին։ Անդրկովկասյան «անանկացած կառավարությունները» ունեին բոլոր հնարավորությունները այն բանի համար, որպեսզի օգտագործեին Թուրքիայի և Գերմանիայի միջև եղած պայքարը և պաշտպանեին երկրամասի անկախությունը։ Ցավոր որոշ, հեղինակը ինքն էլ չի նշում, թե որոնք էին գերմանա-Թուրքական հակասությունները. թեև ուրիշներին հանդիմանում է՝ առանց անունները տալու։ Բացի դրանից, մեր կարծիքով, գերմանա-Թուրքական հակասություններն Անդրկովկասում այն աստիճանի չէին, որպեսզի դրանց օգտագործումը հնարավորություն տար պաշտպանելու երկրամասը առաջ խաղացող Թուրքական բանակից, թեև չենք ժխտում, որ այդ հանգամանքը կնպաստեր Անդրկովկասի պաշտպանության գործին։ Բայց դա արդեն այլ բան է։ Ինչ սին, հեղինակն ինքն էլ չի նշում այդ հակասությունների օգտագործման հնարավոր ուղիները։ Այլ է անդրկովկասյան «կառավարությունների» դավաճանական քաղաքականությունը, որը կազմալուծեց երկրամասի աշխատավորների մարտական ունակությունները։ Այդ հարցը, ինչպես արդեն ասացինք, հոդվածում լուսաբանված է։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում ապրող ժողովուրդների կուլտուրական զարգացմանն է նվիրված Ամինե Ավդալի հոդվածը, որի առաջին մասում ցույց է տրված նախասովետական տարիներին ժողովուրդների ճնշված վիճակը. նրանց հետամնաց ապրելակերպը, հեղինակի բնութագրմամբ, բոշվորական, կիսաբոշվորական և թափառաշրջիկ կյանքը։ Ժողովուրդները չունեին իրենց գիրն ու գրականությունը, մտավորականությունը։ Նախասովետական շրջանի ժողովրդական կյանքի համառոտ նկարագրման այդ ֆոնի վրա էլ հեղինակը ցույց է տվել կուլտուրական այն նշանակալից վերելքը, որ ապրել է բուրդ ժողովուրդը Հայաստանում՝ անցած քառասուն տարիներին։ Այդ վերելքը, հոդվածագրի տվյալներով, բնորոշվում է հետևյալ փաստերով. ստեղծվել է գրական այբուբեն. գրականություն. գործում են գրական դպրոցներ, ակումբ-գրադարաններ. Հայաստանի Գրողների Միության կազմում՝ բուրդ գրողների սեկցիա. լույս է տեսնում «Ռյա-Թազա» թերթը. հրատարակվում են գրքեր և այլն։ Ստեղծվել է բուրդ մասավորականություն, որն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ռեսպուբլիկայի տնտեսական ու կուլտուրական կյանքին։ Այս բոլորը, սակայն, չարագրվում է տեղ-տեղ թվարկման կարգով, որը հոդվածին չի կարող չտալ մակերեսային բնույթ։ Ինչ որում, հոդվածագիրը Հայաստանում ապրող բուրդ ժողովրդի կուլտուրական վերելքը չի կապել ասիական ռեսպուբլիկայում տեղի ունեցած կուլտուրական ռևոլյուցիայի հետ. մի հանգամանք, որը օրգանապես առնչվում է իր բռնարկած հարցին և անշուշտ կրարձրացներ հոդվածի գիտական մակարդակը։

Նորագույն պատմության կարևոր թեմաներից մեկին է նվիրված Արևելագիտության ինստիտուտի դիտաշխատակից Ռ. Սահակյանի «Սովետա-Թուրքական 1923 թ. պայմանագրի հարցի շուրջը» հոդվածը, որտեղ հեղինակը մերկացնում է այդ պայմանագրին արևմտաեվրոպական և Թուրքական ռեակցիոն պատմագրության ներկայացուցիչների տված դնահատականը և ցույց տալիս այն կարևոր նշանակությունը, որ ունեցել է պայմանագիրը Սովետական Միության և Թուրքիայի միջև հարաբերությունները ամրապնդելու. Մերձավոր և Միջին Արևելքում անվտանգություն պահպանելու գործում։ Պայմանագրի նշանակության ասիթով հոդվածագիրը նշում է, որ այն փաստորեն դուրս էր գալիս երկու երկրների միջև եղած հարաբերությունները ամրապնդելու շրջանակներից, որովհետև ինչպես ինքն է գրում, «այդ պայմանագրով Սովետական Միությունը առաջինը հանդես եկավ միջազգային քաղաքական ասպարեզ չնարձակվելու և քաղաքական խմբակցություններին չմասնակ-

ցելու մասին պակտերի նախագծով և դրանով իսկ միջազգային պրակտիկայի մեջ առաջին անգամ մտցրեց տնտեսական ու բաղաքական տարբեր կարգ ունեցող պետությունների միջև պայմանագրային հարաբերությունների այդ նոր ձևը» (էջ 99)։

Իր հոդվածի վերջում (էջ 102) Մանկյանը գրում է, որ «Ժամանակակից Թուրքիայի կառավարող շրջանները, հրաժարվելով չեզորության քաղաքականությունից, երկիրն ամբողջությամբ ենթարկեցին իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականությանը։ Մեզ թվում է, որ հեղինակի այս ձևակերպումը չի կարող առարկություն չառաջացնել այն իմաստով, որ Թուրքիան (ինչպես հեղինակը, այնպես էլ մենք նկատի ունենք առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանը) բաց էությամբ երբեք էլ չի վարել չեզորության քաղաքականություն։ Այդ է ապացուցում միջազգային ասպարեզում Թուրքիայի վարած քաղաքականությունը վերջին տասնամյակներին։

18-րդ դարում կաթոլիկական միսիոներների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում հայերի մղած պայքարի մասին է պատմում իր հոդվածում պատմական գիտությունների թեկնածու Տ. Հակոբյանը։ Նա քննության առարկա է դարձրել Մատենադարանից վերցված պարսկերեն չորս վավերագրեր, որոնք վերաբերում են 1705—1709, 1711 և 1740 թվականներին։ Այդ փաստաթղթերի ուսումնասիրությամբ նա մերկացնում է երկու եկեղեցիների միացման՝ ունիթորության նպատակները, որպես հայերին ասիմիլյացնելու քաղաքականություն։ Մյուս կողմից հոդվածում նշվում է, որ ելնելով իրենց շահերից, պարսկական դահերը ֆարմաններ էին ընդունում կաթոլիկների գործունեության դեմ։ Այդ առիթով հեղինակը քննարկում է Սուլթան-Հուսեյնից ձեռք բերված ֆարմանները (1709 և 1711 թթ.)։ Սակայն հայերի կողմից կաթոլիկական քարոզիչների դեմ մղված պայքարի լուսաբանումը հոդվածում լայն տեղ չի բռնել, թեև այն ուղղակի բխում է վերնագրից։ Թերևս դրա պատճառն այն է, որ հոդվածագիրը սահմանափակվել է հիշյալ չորս վավերագրերի քննությամբ։ Այդ դեպքում անհրաժեշտություն չկար նման վերնագիր տալ հոդվածին։

«Հոդվածներ»-ում տպագրված է Ա. Սաֆրաստյանի «Օսմանյան կայսրության վարչական բաժանումը 18-րդ դարում» հետաքրքիր պատմական ակնարկը։ Թուրքական պաշտոնական փաստաթղթերի հիման վրա հոդվածում քննարկվում է 17-րդ դարում Օսմանյան լայնածավալ կայսրության վարչական բաժանումը և ցույց է տրվում, որ վարչական հիմնական միավորներին զուգահեռ գոյություն ունեին կիսաանկախ խանություններ, չերիֆություններ, հյուրությունքներ և այլն։ Հեղինակը նշում է, որ Թուրքիայի վարչական բաժանումը հիմնված էր հողային, հարկային և ռազմական կազմակերպությունների վրա և այդ կապակցությամբ էլ քննարկում է թուրքական սազմաֆեոդալական ինստիտուտները և դրանց հետ կապված հարկային ու զինվորական պարտավորությունները։

Բանասիրական լուրջ պրպտումների արդյունք է Բ. Զուբաբյանի «Առասպել Բյուրասպի Աժդահակի մասին ըստ Մովսես Խորենացու» հոդվածը, որտեղ նա քննարկելով այդ առասպելը ըստ Մովսես Խորենացու և այն մանրամասն համեմատելով պարսից ազգյուրների հետ, եզրակացնում է, թե Մ. Խորենացին հարազատորեն հաղորդել է Բյուրասպի Աժդահակի զրույցը, որ այժմ չարության ներկայացուցիչ Աժդահակը շատ վաղ ժամանակներում հավանաբար եղել է բարի աստվածություն կամ դյուցազն, և վերջապես որ «Ֆիրդուսու մոտ պահպանված Զոհակ-Դահակ անունը շատ ավելի հին ձև է, որը հետագայում, գիվացման ժամանակ, ածի «օձ», վիշապ անվան կցումով դարձել է Աժի-Դահակ՝ Աժդահակ» (էջ 230)։

«Հոդվածներ»-ում հոդվածներով հանդես են եկել նաև սկսնակ գիտաշխատակիցներ Ս. Ավանեսովը («Մերձավոր և Միջին Արևելքում ագրեսիվ բլոկներ ստեղծելու հարցի շուրջը»), Հ. Թուրյանցը («Նավթային նոր կոնցեսիաները Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում»), Ռ. Կոնդակչյանը («Ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի ներխուժումը Թուրքիա»), Ա. Ավետյանը («Եվրոպական մոնոպոլիստական կապիտալի պայքարը ռազմական մատակարարման համար Թուրքիայում՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին») և Բ. Բալայանը («Շահսեանների և Կաշեայցիների միասնական էթնոգենեզի հարցի շուրջը»)։

«Հոդվածներ»-ը եզրափակվում է «Հազորդումներ» բաժնով, ուր զետեղված է Ե. Սարգիսովի և Ա. Սաֆրաստյանի «Պատմության հակաֆեոդալական լուսաբանման մի քանի փաստերի մասին» արժեքավոր հոդվածը։ Թուրքական պատմության Ընկերության չորսհատորանոց պատմության աշխատության, ինչպես նաև մի շարք թուրք պատմաբանների առանձին մենագրությունների քննարկմամբ հեղինակները մերկացնում են ժամանակակից թուրքա-

կան պատմագրության մեջ տիրապետող թուրքիզմի կոնցեպցիան, որպես նացիոնալիզմի և շովինիզմի արտահայտություն: Թուրքական բազմաթիվ աղբյուրներից բերված փաստերի օգնությամբ նրանք ցույց են տալիս, որ թուրքերին աշխարհի բոլոր ազգերից վեր դասող և նրանց մարդկության բազարակրթության առաջնեկներ ու ստեղծողներ համարող այդ բարբաջանքը ընդհանուր ոչինչ տունի գիտության հետ: Հենվելով պատմական անժխտելի փաստերի վրա, հաղորդման հեղինակները արմատապես հերքում են թուրք մի շարք պատմաբանների կողմից հայ և վրաց ժողովուրդների պատմության կանխակալ կեղծումը, պատմաբաններ (Խալիլ Ուրան, Զարբ և այլն), որոնք սատափորը բերանները հրգնում են ցաքացուցեալ. թե հայերը երբեք չեն ունեցել իրենց հայրենիքն ու պետականություն, որ նրանք եկվոր ժողովուրդ են և ապաստան են գտել թուրքական պետության մեջ: Հեղինակները հանդես են գալիս նաև թուրքական ոնակցիոն պատմագրության կողմից հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության կեղծման դեմ, կեղծում, որի նպատակն է արդարացնելու այն հայածին քաղաքականությունը, որ վարեց երիտասարդ թուրքերի կառավարությունը Հայաստանում՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Ելրափակելով գրախոսական, նշենք, սակայն մի ընդհանուր գիտողություն, որն տրվեն վերաբերում է ամբողջ ժողովածուին, ավելի շուտ նրա խմբագիրներին. մեր կարծիքով ներկա ժողովածուի լուրջ թացերից է այն, որ այնտեղ չկա ոչ մի հոդված Արաբական Արևելքի երկրների վերաբերյալ: Մինչդեռ դա անհրաժեշտ էր: Եվ այդ անհրաժեշտությունը թելադրվում է ոչ միայն Արևելագիտական սեկտորի բնույթով, այլև այն կարևոր դերով, որ խաղում են Արաբական Արևելքի երկրները ժամանակակից պայմաններում: Հուսանք, որ սեկտորի երկրորդ ժողովածուն զերծ կլինի այդ թերություններից:

Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳԻՆՍԱԿԱՏԵՆ ԷՐԱՍՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 40-ամյակը Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմական թանգարանը գիմավորեց հայ ժողովրդի 19-րդ դարի պատմությանը նվիրված նոր բաժնի բացումով:

Նոր ցուցադրության առաջին սրահները կազմակերպված են նախկինում եղած ցուցադրության՝ Հայաստանի 19-րդ դարի 1-ին կեսի պատմության հիման վրա, որում, սակայն, կատարվել են մի շարք էական փոփոխություններ: Ձևոք են բերված նոր նյութեր, որոնք արտացոլում են հայ ժողովրդի ծանր վիճակը ցարական Գարակատանի և սուլթանական Թուրքիայի արյունոտ հիրանների մեջ:

Այն բաժինը, որը նվիրված է Արևելյան Հայաստանի ազատագրմանը սուսական բանակի կողմից 1826—1828 թթ., լրացված է մի նոր սենյակով, ուր վերջերս ձեռք բերված նյութերը նոր լույս են սփռում այդ կռիվներում սուս զեկավարներ Ի. Ֆ. Պասկևիչի, Ա. Ա. Բենկենդորֆի, Ա. Ի. Օզոնովի, Մ. Ի. Գուլիևի և ուրիշների ունեցած մասնակցության վրա:

Կոմպլեքսային ցուցադրության հաջորդ՝ ամբողջ դարն ընդգրկող սրահներում տեղավորված նյութերը լուսաբանում են հայ ստեղծագործ ժողովրդի կյանքի ու գործունեության տարբեր կողմերը՝ գյուղատնտեսության, արհեստների, արդյունաբերության հարցերը, ազգային ազատագրական և ռևոլյուցիոն շարժումները ու վերջապես նրա կուլտուրան 19-րդ դարում:

Գյուղատնտեսության ու արհեստներին նվիրված սրահները հիմնականում կազմակերպված են նյութական կուլտուրայի մնացորդների հիման վրա, որոնց նյութերի մեծ մասը վերաբերում է 19-րդ դարի 2-րդ կեսին:

Մեծ հետաքրքրություն են առաջացնում գյուղատնտեսական և արհեստավորական գործիքները, համքարների դրոշները: Զանազան յուղաներկ նկարներ և մեծ թվով լուսանկարներ հնարավորություն են տալիս լրիվ պատկերացում կազմելու հայ ազգաբնակ-